

Յ Ա Յ Տ Ա Գ Ի Ր

«ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ», ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



1. Ի յիշատակ հայոց Գրեթի Գիւտի 1500-ամեակին, որ լրանալու է 1904 թուին, մենք ձեռնարկուժ ենք հրատարակելու հայոց հին պատմագիրների լիակատար ժողովածուն՝ ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ ընդհանուր վերնագրով, նուերուժ հայոց գրերի հնարողի, Ս. ՄԵՍՐՈՊ-ՄԱՇԹՈՍԻ ԱՆՈՒՒԱՆ:

2. Պատմագիրքը բովանդակելու է հետեւեալ հայ պատմագիրների լիակատար բնագիրները՝ ժամանակագրական կարգով. — Կորիւն, Ագաթանգեղոս, Փաւստոս, Եղիշէ, Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի, Սեբէոս, Յովհան Մամիկոնեան (Զենոբ Գլակ), Ղեւոնդ երէց, Թովմայ Արծրունի, Յովհաննէս կաթողիկոս, Ուխտանէս, Մեսրոպ երէց, Ստեփանոս Ասողկի, Արիստակէս Լաստիվերացի, Ներսէս Շնորհալի (Ոգր Եղեսիոյ), Կիրակոս Գանձակեցի, Մովսէս Կաղանկատուացի, Սամուէլ Անեցի, Վարդան Բարձրբերդցի, Մատթէոս Ուռնայեցի, Մխիթար Անեցի, Մաղաքիա արեղայ, Սմբատ Դունդտարյ, Մխիթար Այրլվանեցի, Ստեփանոս Օրբէլեան, Հեթում պատմիչ, Արուստի, Գրիգոր Խլաթեցի, Թովմայ Մեծոփեցի, Մինաս վարդապետ Համդեցի, Ընդհաննէս աւագ երէց Կամինեցոյ, Առաքիլ Դաւրիժեցի, Զաքարիա սարկաւագ, Ազոստինոս Բաջեցի, Եսայի Հասան-Չալալեան, Պետրոս դի Գիւլաննեց, Դաւիթ բէգ (Ստ. յ. Ծանուսեան), Աբրահամ Կրեւացի, Սիմէօն կաթողիկոս (Չամբո), Զաքարիա Ալուչեցի, Թովմայ Խոջամալեան, Ժամանակագրութիւն (Մանանայից), Յովհաննիսիկ վարդապետ, Սիմէօն Սպարանացի (եւ ձեռագիրներից) Վահրամ բաբունի, Մարտիրոս Երզնկացի, Երեմիա Չէլէպի, Մաղաքիա Ճէվահիրճեան, Աւետիք երէց Ղափանցի: — Գուցէ եւ ուրիշ հեղինակներ՝ որոնք կարող են յայտնուել հրատարակութեան ընթացքում:

3. Հրատարակութիւնը պէտք է լինի ընտիր՝ ներքուստ եւ արտաքուստ: Հեղինակները կրողատուին Ս. Էջմիածնի Մատենադարանի ձեռագիրների հետ, (որի համար ստացուած է վեհափառ կաթողիկոսի բարեհաճ թոյլտուութիւնը) եւ կտպագրուին ձեռագիրների լիակատար վարիանտներով՝ ամենայն հաւատարմութեամբ: Բացի որանից՝ կողմը ղուին նրանց մէջ սպրդած աղաւաղութիւնները, որոնք նկատուած են բանասիրական քննադատութեան կողմից: — Իւրաքանչիւր հեղինակից առաջ կը դրուին հակիրճ եւ ստոյգ տեղեկութիւններ՝ վերաբերեալ նրանին եւ նրա աշխատութեան տպագրութեանը, բաղդատուած ձեռա-

գիրներին եւ այլն . իսկ իւրաքանչիւր հեղինակից յետոյ կզետեղուի մանրամասն եւ ճիշտ ցուցակ նրա պատմութեան մէջ գործ ածուած յատուկ անուաններ :

4. Ամեն մի հեղինակ լոյս կտեսնէ առանձին , իւր յատուկ թրւահամարով , այն կերպով , որ իւրաքանչիւրը իւր թուահամարով զետեղուելով՝ ամբողջ հրատարակութիւնը կազմէ հինգ մեծադիր հատոր , ամեն մէկը բաղկացած մօտ 1000 երկսիւնակ երեսներէ :

5. Հրատարակութեան աշխատակցից առկէն յանձն են առել — Գարեգին վ. Յովսէփեան , Կարապետ վ. Տէր-Մկրտչեան , Սահակ վ. Ամատունի , Մեսրոպ եւ Ներսէս արեղաներ , Միսրան Գալուստ Տէր-Մկրտչեան , պ. պ. Արեղան Մ. , Կանայեան Սա. , Կոստանեան Կար. , Մալխասեանց Սա. , Մանանդեան Յակ. , Յարութիւնեան Սէթ , Հրաւիրուած է նորայր Բելզանդացի , Երբ հարկը պահանջէ՝ կինդրուի եւ ուրիշ մասնագէտներ յաշխատակցութիւնը : — Գործի ընդհանուր խմբագրութիւնը եւ տպագրութեան հսկողութիւնը ստանձնել է Սա. Մալխասեանց :

6. Հրատարակութեան ամբողջ ծախսը — թէ՛ տպագրութիւնը եւ թէ՛ աշխատակիցներ ղարձատրութիւնը — հաշուած է մօտաւորապէս 20,000 րուբլի :

7. Մխար ծածկելուց յետոյ՝ հրատարակութիւնից միայլիք բոլոր արդիւնքը , զբամով կամ դրփով , կյատկացնուի ապագկելու երկու Յաւելուած հատոր , որոնց առաջինի մէջ կմանեն օտարազլի պատմագիրներ հին հայերէն թարգմանութեամբ , (Աբու-բնայ , Եւսեբիոս Կեսարացու ժամանակագրութիւն , Սոկրատ , Միքայէլ Ասորի եւ այլն) , իսկ երկրորդի մէջ՝ ընտիր հայ հեղինակներ՝ ոչ-պատմական բովանդակութեամբ , (Յնիկ , Անանիա Շիրակացի , Մխիթար Գօշ , Գր. Մագիսարոս եւ այլն) , Այնուհետեւ բոլոր հրատարակութիւնը , — թէ՛ բուն պատմագիրքը եւ թէ՛ Յաւելուած հատորները , — կդառնայ սեփականութիւն Ս. Էջմիածնի Մատենադարանի , որի տրդինյով հետզհետեւ կապագրուին այդ Մատենադարանի անտիպ նիւթերը :

8. Ամեն մի նուիրատուութիւն , պայմանաւոր թէ անպայման , կը յիշուի հրատարակութեան ընթացքում , եւ՝ հրատարակութիւնը վերջանալուց յետոյ կզբուի նուիրատուների լիակատար ցուցակը :

9. Հրատարակութեան հիփի եւ մուտքի մասին պարբերաբար հաշիւ կարուի , եւ հրատարակութեան վերջում կտպուի մանրամասն հաշիւ :

10. Հրատարակութիւնն սկսուելու է 1903-ին եւ վերջանալու է մօտաւորապէս հինգ տարուայ ընթացքում :

11. Հրատարակիչներէից մէկի հեռանալու դէպքում մնացած երկուսը հրաւիրում են երրորդ անգամ հաւասար իրաւունքներով :

12. Թէ՛ նուէրներ ուղարկելու եւ թէ՛ ուրիշ անզեկութիւններէ համար դիմելու է խմբագրին — Սա. Մալխասեանցին . (Tiflis (Caucase), Séminaire Arménien Nersisseean, Stépan Malchasseantz).

Հրատարակիչներ—Գարեգին վարդապետ Յովսէփեան , Միսրան Գալուստ Տէր-Մկրտչեան (Էջմիածնում) եւ Ստեփան Մալխասեանց (Թիֆլիս) :